

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ

team™
TELECOM ARMENIA

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խորհրդի նախագահի ուղերձ 3

Գլխավոր տնօրենի ուղերձ..... 4

1. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 6

1.1. Պատմական ակնարկ 6

1.3. Ընկերության ռազմավարությունը 8

1.4. Տարվա բիզնես գործունեության արդյունքները 11

Շարժական կապ 11

Ամրակցված կապ 13

1.5. Ձեռնարկատիրական գործունեության հետ կապված գլխավոր փոփոխությունները 16

Կազմակերպաիրավական ձևի փոփոխություն /IPO 16

1.6. Բնապահպանական և սոցիալական ցուցանիշներ 17

Տարեկան բնապահպանական ցուցանիշների ամփոփ ներկայացում 18

Աշխատանքի անվտանգություն և առողջության պահպանում 20

Վարվելակերպի կանոններ 20

2. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 21

2.1. Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը 21

2.2. Խորհրդի անդամներ 23

2.3. Ռիսկային գործոնները 25

3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ 35

3.1. Արտաքին աուդիտն իրականացնող անձանց անունը և վարձատրությունը, ինչպես նաև նրանց անկախության փաստի ստուգման արդյունքները 35

3.2. Շահույթի տեղաբաշխման և բաշխման, այդ թվում շահութաբաժինների վճարման առաջարկությունները 36

4. ՀԱՎԵԼՎԱԾ 37

4.1. ԿԿ Հայտարարագիրը Կանոնագրքին հետևելու և/կամ մանրամասն բացատրությունը՝ չհետևելու և դրա պատճառների մասին 37

Խորհրդի նախագահի ուղերձ

Հարգելի բաժնետերեր,

Ամփոփելով 2023 թվականը, ուզում եմ փաստել, որ հավատարիմ ենք մնացել թափանցիկության, նորարարության և կայուն աճի նկատմամբ մեր հանձնառությանը և մեր համարձակ որոշումներն ու քայլերը նշանակալի արդյունքներ են տվել:

2023 թվականը նշանավորվեց մեր ընկերության համար կարևորագույն մի քայլով՝ Team Telecom Armenia-ն դարձավ առաջին տելեկոմ ընկերությունը Հայաստանում, որի բաժնետոմսերն առաջնային հրապարակային տեղաբաշխման (IPO) միջոցով ցուցակվեցին ֆոնդային բորսայում: Սա շրջադարձային իրադարձություն էր ոչ միայն մեր ընկերության, այլև Հայաստանի հեռահաղորդակցության ոլորտի և առհասարակ կապիտալի շուկայի համար, քանի որ այն սկիզբ դրեց Հայաստանում ներդրումներ կատարելու նոր մշակույթի ձևավորմանը:

Մեր ընկերության բաժնետերեր դարձան հարյուրավոր ֆիզիկական ու իրավաբանական անձինք, էական ծավալի ներդրումներ իրականացրեցին ինստիտուցիոնալ ներդրողները:

Առաջին անգամ Հայաստանում «Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» ընկերությունը իր կառավարման ներքո գտնվող կուտակային կենսաթոշակային ֆոնդերի ակտիվներից 1 միլիարդ 648 միլիոն ՀՀ դրամին համարժեք ուղղակի ներդրում կատարեց տնտեսության իրական հատվածում՝ ձեռք բերելով Տելեկոմ Արմենիա ԲԲ ընկերության բաժնետոմսեր: Այս քայլով ֆոնդի մոտ 400 հազար շահառու անուղղակի կերպով դարձան մեր ընկերության բաժնետեր:

Մենք մեծ պատասխանատվությամբ ենք մոտենում մեզ վստահված միջոցների կառավարմանը և ուղղել ենք դրանք Հայաստանի ողջ տարածքում օպտիկամանրաթելային NGN ցանցի ընդլայնմանը, մեր բջջային ցանցում 5G տեխնոլոգիայի ներդրմանը և միջազգային նոր կապուղիների ակտիվացմանը: Ուրախ եմ ողջունելու մեր 1000 նոր բաժնետերերին, ովքեր միացել են մեր երկրի համար այս կարևոր ծրագրերին և վստահ եմ, որ միասին մենք ընթանալու ենք շարունակական հաջողության ուղով:

Հաճախորդների ակնկալիքները գերազանցելու մեր հաստատակամ հանձնառությունն է, որ մեզ ուղղորդում է առաջ՝ իրագործելու մեր բոլոր նպատակները և կայուն արժեքներ ստեղծելու մեր երկրի համար:

Մենք հավատարիմ ենք մնում նաև կորպորատիվ սոցիալական պատասխանատվության մեր հանձնառությանը: Կրթական, գիտական և մշակութային նախաձեռնություններին մեր աջակցության, ինչպես նաև սպորտային ծրագրերում ներգրավվելու միջոցով մենք ակտիվորեն նպաստում ենք մեր համայնքների բարեկեցությանը և զարգացմանը: Մեր ռազմավարության և գործառնական պրակտիկայի մեջ արմատավորված է բնապահպանական, սոցիալական և կառավարման սկզբունքներին մեր նվիրվածությունը: Այս ջանքերը համահունչ են մեր հիմնական արժեքներին և ամրապնդում են մեր դիրքը՝ որպես պատասխանատու ընկերություն:

Ալեքսանդր Եսայան / Խորհրդի նախագահ

Գլխավոր տնօրենի ուղերձ

Հարգելի հաճախորդներ, բաժնետերեր և գործընկերներ,

Հպարտ եմ ձեզ հետ կիսվելու «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ 2023 թվականի արդյունքներով: Տարվա ընթացքում մենք արձանագրեցինք կայուն աճ մեր գործունեության բոլոր սեգմենտներում, ինչը փաստում է, որ մենք շարժվում ենք ճիշտ ուղեգծով:

2023-ին մեր ընկերությունը հետևողականորեն իրագործել է իր ռազմավարության հիմքում դրված առանցքային ծրագրերը.

- Տարածաշրջանում եզակի NGN ցանցի կառուցման շնորհիվ այսօր արդեն 25 Գբ/վ թողունակությամբ գերարագ կապից օգտվելու հնարավորություն ունեն 225 000 տնային տնտեսություն Ագարակ, Ալավերդի, Արթիկ, Արմավիր, Արտաշատ, Բերդ, Բյուրեղավան, Գավառ, Եղվարդ, Իջևան, Հրազդան, Ճամբարակ, Մեծամոր, Ջերմուկ, Սևան, Սպիտակ, Վարդենիս, Կապան, Քաջարան, Սիսիան, Նոր Հաճն, Գորիս, Մեղրի մարզային խոշոր քաղաքներում ու մի շարք գյուղերում: Երևանում NGN ցանցը հասանելի է Դավթաշեն, Արաբկիր, Ավան, Ձեյթուն վարչական շրջաններում և Նոր Նորքի 1-ին, 2-րդ զանգվածներում:
- 2023 թվականին կազմակերպված 700 ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթների ձեռքբերման մրցույթների արդյունքում մեր ընկերությունը ստացել է ընդհանուր առմամբ 40 ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթներ օգտագործելու թույլտվություն, ինչը մեզ թույլ կտա է՛լ ավելի մեծացնել 4G ցանցի հասանելիությունը և ներդնել 5G տեխնոլոգիան Հայաստանի Հանրապետության երեք խոշոր քաղաքների բջջային ցանցերում: Ռադիո հասանելիության ցանցի արդիականացման շրջանակներում 2023-ին վերազինել ենք 34 բջջային կայան:
- Ստեղծելով ավելի ճկուն ու բարձրարագ միջազգային կապուղիների ենթակառուցվածք՝ մենք շարունակում ենք մեր դիրքերն ամրապնդել տեղական և տարածաշրջանային հեռահաղորդակցության օպերատորներին տվյալների տարանցման ծառայությունների մատուցման ոլորտում: 2023 թվականին «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն նոր ներկայացուցչական կետեր է ավելացրել Ֆրանկֆուրտի և Ամստերդամի երկու խոշորագույն տվյալների կենտրոններում:
- Որպես առաջադեմ տեխնոլոգիական ընկերություն՝ մենք վստահ քայլեր ենք կատարել մեր ծառայությունների պորտֆելի դիվերսիֆիկացման ուղղությամբ՝ ներկայացնելով Team Energy նախագիծը, որն ուղղված է Հայաստանում շրջակա միջավայրի համար էկոլոգիապես մաքուր մեքենաների ավելացմանը:
- Հետամուտ լինելով ոլորտի լավագույն չափանիշների պահպանման և կառավարման միջազգային ստանդարտների ներդրման մեր հանձնառությանը՝ 2023 թվականին ստացանք ISO/IEC 27001:2013 միջազգային ստանդարտի պահանջներին համապատասխանության հավաստագիրը:

- Եվ, իհարկե, մեր ընկերությունը անմասն չի մնացել կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրերից՝ աջակցելով կրթական, գիտական և մշակութային մի շարք նախաձեռնություններին և տարածաշրջանում ամենամեծ տեխնոլոգիական միջոցառումներին:

Այս բոլոր հաջողությունների հետևում կանգնած են մեր նվիրված, հետևողական ու առաջադեմ թիմը, բաժանորդներն ու գործընկերները:

Շնորհակալ եմ յուրաքանչյուրիդ գործադրած ջանքերի, վստահության ու համագործակցության համար:

Հայկ Եսայան / Գլխավոր տնօրեն

1. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.1. Պատմական ակնարկ

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն հանդիսանում է Հայաստանի առաջին հեռահաղորդակցութան համակարգի ավելի քան 100-ամյա պատմության ժառանգորդը:

Հայաստանի Հանրապետության հռչակումից ի վեր՝ 1995 թ.-ին ընկերությունը սկսել է գործել «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» անվան ներքո:

Ընկերությունը ՀՀ-ում մատուցում է 2G (GSM), 3G (UMTS) և 4G (LTE) ստանդարտի շարժական կապի, ամրակցված հեռախոսակապի, թվային հեռուստատեսության IPTV և OTT ծառայություններ[1], ինչպես նաև ապահովում է ամրակցված ինտերնետ հասանելիություն՝ FTTH, FTTB, VDSL և ADSL տեխնոլոգիաներով:

1995թ.-ին Ընկերությունը ՀԾԿՀ կողմից ստացավ Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շահագործման Թիվ 60 Լիցենզիան:

1996թ.-ին Ընկերությունը առաջին անգամ ՀՀ-ում գործարկեց 2G երկրորդ սերնդի (GSM) բջջային ցանցը:

1998թ.-ին OTE (Hellenic Telecommunications) ընկերությունը ամերիկյան ընկերությունից ձեռք բերեց «ԱրմենՏել» ընկերության բաժնետոմսերը, որոնք 2006-2007թթ.-ին վաճառվեցին VimpelCom Ltd (ներկայումս՝ VEON Ltd) ընկերությունների խմբին:

2007թ.-ից Ընկերությունը սկսեց մատուցել ամրակցված լայնաշերտ ինտերնետի ծառայություններ՝ ADSL տեխնոլոգիայի հիման վրա:

2007թ.-ին երկարաձգվեց Թիվ 60 լիցենզիայի գործողության ժամկետը: Լիցենզիան գործում է մինչև 2028թ.-ի մարտի 3-ը:

2007թ.-ին Ընկերությունը ստացավ 3G երրորդ սերնդի (UMTS) բջջային ցանցի համար ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունները, որից հետո 2008թ.-ին առաջին անգամ ՀՀ-ում գործարկեց 3G ցանցը:

2008թ.-ին Ընկերությունը նախաձեռնեց նոր 3G բազային կայանների ինտենսիվ գործարկումը: 2023թ.-ի դեկտեմբերի վերջի դրությամբ Ընկերությունն ունի 1024 բազային կայաններ (որից 880-ը՝ մակրոկայաններ)՝ ցանցի հասանելիությամբ ապահովելով բնակչության 99,1%-ին:

[1] Ցանցային օպերատորների ենթակառուցվածքների կամ համացանցի միջոցով տեսալսողական տեղեկատվության տարածման ծառայություններ

2012թ.-ին Ընկերությունը ամրակցված կապի շուկայում գործարկեց FTTB (Fiber to the Building - Օպտիկա մինչև Շինություն) ցանցի միջոցով լայնաշերտ ինտերնետի ծառայությունները

2015թ.-ին Ընկերությունն առաջին անգամ շուկայում առաջարկեց մեկ վճարային հաշվով ամրակցված և շարժական կապի ծառայությունների համակցված (կոնվերգենտ) փաթեթ:

2016թ.-ին Ընկերությունը գործարկեց 4G չորրորդ սերնդի (LTE) բջջային ցանցը, որը ներկայումս հասանելի է երկրի բնակչության 74.06%-ին:

2016թ.-ին Ընկերությունը ՀՀ մարզային բնակավայրերի 99%-ում ապահովեց ամրակցված հեռախոսակապի և ինտերնետի անլար տեխնոլոգիայով (CDMA) հասանելիությունը:

2017թ.-ին Ընկերությունը վերանվանվեց «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի:

2018թ.-ին Ընկերությունը ամրակցված կապի շուկայում գործարկեց VDSL լայնաշերտ ինտերնետի և IPTV ծառայությունները:

2019թ.-ին Ընկերությունը առաջարկեց իր BeeTV հեռուստատեսային հավելվածը և ավելի ընդգրկուն ամրակցված և շարժական կապի համակցված (կոնվերգենտ) փաթեթներ:

2020թ.-ի հոկտեմբերին «Թիմ» ՍՊԸ-ն ձեռք բերեց Ընկերության 100% բաժնետոմսերը: Նույն տարվա նոյեմբերին Ընկերությունը վերանվանվեց «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ի:

2021թ.-ից Ընկերությունը ամրակցված կապի շուկայում նախաձեռնեց տարածաշրջանում եզակի՝ 25 Գբ/վ արագությամբ 25G-PON տեխնոլոգիայով NGN (Next Generation Network) FTTH (Fiber to the Home - Օպտիկա մինչև բնակարան) ցանցի կառուցումը: Նույն թվականից Ընկերությունը՝ DWDM օպտիկամանրաթելային ցանցի շնորհիվ տարածաշրջանային հեռահաղորդակցության օպերատորներին սկսեց մատուցել Ասիայից Եվրոպա տվյալների տարանցման ծառայություններ:

2021թ.-ի ապրիլին Ընկերությունը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կողմից ստացավ ՀՀ տարածքում ցանցային օպերատորի գործունեության լիցենզիա, որը գործում է մինչև 2031թ.-ի ապրիլի 29-ը: Նույն տարվա դեկտեմբերին Ընկերությանը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կողմից տրվեց թույլտվություն ոչ գծային տեսալսողական տեղեկատվության հեռարձակման գործունեություն իրականացնելու համար, որը գործում է անժամկետ:

2008-2022թթ.-ի ընթացքում Ընկերությունը գործել է «Beeline» ապրանքանիշի ներքո:

2022թ.-ի մայիսին տեղի ունեցավ Ընկերության վերաբրենդավորումը Team Telecom Armenia ապրանքանիշի:

2022թ.-ի մայիսին Ընկերությունը ներգրավեց ընդհանուր առմամբ $45 մլն միջազգային ֆինանսական հաստատություններից՝ IFC-ից, EBRD-ից և Ամերիաբանկից՝ գերարագ ինտերնետի հասանելիությունը բարելավելու և Հայաստանում հզոր թվային տնտեսությանն աջակցելու համար:

2023թ.-ին Ընկերությունը առաջինը հեռահաղորդակցության ոլորտում առաջնային հրապարակային տեղաբաշխման (IPO) միջոցով բաժնետոմսեր թողարկեց՝ Հայաստանի Արժեթղթերի բորսայում տեղաբաշխելով 40 միլիոն բաժնետոմս՝ 8,24 միլիարդ դրամ ընդհանուր արժեքով:

2023թ.-ին առաջինը Հայաստանի հեռահաղորդակցության ոլորտում Ընկերությունը գործարկեց նորարական Team Energy նախագիծը, որտեղ հատվում են հեռահաղորդակցությունը, էներգետիկան և էկոլոգիան: Այս նախագիծը հնարավորություն է տալիս խթանել և հեշտացնել էլեկտրական մեքենաների օգտագործումը Հայաստանում՝ զգալիորեն կրճատելով օդի աղտոտվածությունը և տրանսպորտային ծախսերը:

1.3.Ընկերության ռազմավարությունը

Մեր ռազմավարության հիմքը մեր առաքելությունն է՝ մարդկանց կյանքը դարձնել ավելի հասանելի ու հարմար՝ ներդնելով թվային նորագույն տեխնոլոգիաներ: Մենք ձգտում ենք թիմի ստեղծագործ մտքի և տեխնոլոգիաների անսպառ հնարավորությունների համադրության շնորհիվ դառնալ ոլորտի առաջատար: Հետամուտ լինելով այս տեսլականին՝ «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի ռազմավարությունը կառուցվում է հետևյալ հենասյուների վրա.

Team Էկոհամակարգ

Մենք ստեղծում ենք ցանցային, սերվերային և ծրագրային հզոր ու ճկուն ենթակառուցվածք, որը կապահովի այսօրվա և ապագայի ծառայությունների արագ ներդնումն ու որակյալ մատուցումը: Սա նշանակում է, որ մենք շարունակաբար արդիականացնելու ենք մեր կոմունիկացիոն ցանցերը և մեր ամենօրյա աշխատանքում օգտագործվող SS համակարգերը: Տարածաշրջանում եզակի 25 Գբ/վ արագությամբ NGN (Next Generation Network) ցանցի կառուցումը մեր ռազմավարության կարևոր շարժիչ ուժն է: Մենք շարունակելու ենք ընդլայնել ու արդիականացնել ֆիքսված և շարժական ցանցերը երկրի ողջ տարածքում՝ բարելավելով ինչպես անհատ բաժանորդներին, այնպես էլ բիզնես հաճախորդներին տրամադրվող ծառայությունների որակն ու

խթանելով մեր երկրում թվային տնտեսության և ձեռներեցության զարգացումը: Ավելին, ստեղծելով ավելի ճկուն ու բարձրարագ միջազգային կապուղիների ենթակառուցվածք՝ «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն իր դիրքերը կամրապնդի նաև տեղական և տարածաշրջանային հեռահաղորդակցության օպերատորներին տվյալների տարանցման ծառայությունների մատուցման ոլորտում:

Team Հաճախորդ

Մենք շարունակաբար աշխատում ենք մեր առաջարկներն է՛լ ավելի գրավիչ դարձնելու ուղղությամբ՝ ապահովելով մեր հաճախորդներին գերարագ ինտերնետով տանը, ճանապարհին և աշխատավայրում: Միանալով մեր կոնվերգենտ փաթեթներին՝ Team-ի հաճախորդները ստանում են աշխատելու, սովորելու, խաղալու և սիրված ֆիլմերն ու տեսանյութերը լավագույն որակով դիտելու անսահման հնարավորություն:

Մենք մշտապես աշխատում ենք մեր հաճախորդների փորձառության բարելավման ուղղությամբ շփման բոլոր հարթակներում՝ ներդնելով սպասարկման նոր համակարգեր, առաջարկելով ավելի հարմար ու նորարարական լուծումներ, ինչպես նաև շարունակաբար բարելավելով սպասարկման որակը:

Team Ծառայություններ

Մենք շարունակաբար կատարելագործում ենք մեր թվային հարթակների ծառայությունները և նպատակ ունենք ստեղծել փոխկապակցված ծառայությունների այնպիսի էկոհամակարգ, որը կապահովի մեր հաճախորդների լավագույն փորձառությունը:

Մենք նպատակ ունենք դիվերսիֆիկացնել մեր հասույթը՝ ստեղծելով արդիական լուծումներով նորարարական ծառայություններ: Այդ նպատակին հետամուտ լինելով՝ Ընկերությունը 2023թ.-ին՝ առաջինը Հայաստանի հեռահաղորդակցության ոլորտում գործարկեց նորարական Team Energy նախագիծը, որտեղ հատվում են հեռահաղորդակցությունը, էներգետիկան և էկոլոգիան: Այս նախագիծը հնարավորություն է տալիս խթանել և հեշտացնել էլեկտրական մեքենաների օգտագործումը Հայաստանում՝ զգալիորեն կրճատելով օդի աղտոտվածությունը և տրանսպորտային ծախսերը:

Team Կառավարում

Լինելով հեռահաղորդակցության ոլորտում առաջատար ընկերություն՝ մենք առանձնահատուկ կարևորություն ենք տալիս արդյունավետ կառավարմանը: Հետևաբար, մենք շարունակելու ենք զարգացման և աճի համար անհրաժեշտ միջոցների ներգրավումը: Հաջողությամբ տեղաբաշխելով Ընկերության բաժնետոմսերը՝ մենք ցույց տվեցինք մեր հավատարմությունը թափանցիկ գործունեությանը և պոտենցիալ ներդրողների ու հաճախորդների վստահությունը շահելուն:

Ֆինանսական կայուն աճ ստեղծելու գործում չափազանց կարևոր է ծախսերի նկատմամբ մեր ողջամտությունը: Առաջատար հեռահաղորդակցության ընկերություն լինելը մեզ համար նշանակում է առաջատար լինել նաև գործառնական արդյունավետության առումով՝ սկսած ենթակառուցվածքների հնարավորությունների արդյունավետ օգտագործումից մինչև մատակարարման շղթաների կառավարում:

Ոլորտի լավագույն չափանիշների պահպանման, պրոֆեսիոնալիզմի բարձր մակարդակի և շարունակական բարելավման նպատակով, մենք ներդնում ենք միջազգային կառավարման ստանդարտներ՝ բավարարելով որակի, տեղեկատվական անվտանգության և շրջակա միջավայրի պահպանության պահանջները:

2023թ.-ին «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն ամրապնդեց իր հաջողությունը՝ ստանալով ISO/IEC 27001:2013 տեղեկատվական անվտանգության ստանդարտին համապատասխանության հավաստագիր: Հավաստագիրը տրվել է «CERT International» s.r.o-ի կողմից իրականացված համապարփակ աուդիտից հետո: Աուդիտը ներառել է Ընկերության գլխամասային գրասենյակի և ՀՀ բոլոր մասնաճյուղերի գնահատումները և տարբեր ասպեկտների ուսումնասիրությունը՝ ներառյալ ֆիզիկական և տեղեկատվական անվտանգության գործընթացները, ուսուցումը, գնումները և ցանցային անվտանգության կառավարումը:

Ընկերությունը նպատակադրված է առաջիկայում ներդնել նաև ISO 9001:2015 որակի և ISO 14001 բնապահպանական կառավարման համակարգերի ստանդարտները: Այսպիսով, ռեսուրսների օգտագործումը օպտիմալացնելու, էկոլոգիապես մաքուր գործելակերպ որդեգրելու և անվտանգ աշխատանքային միջավայր ստեղծելու այս ջանքերն ընդգծում են բիզնեսի կայուն աճ ապահովելու մեր հանձնառությունը:

Team Մարդիկ

Մեր գործունեության սրտում և մտքում Մարդն է:

Մենք կարևորում և արժևորում ենք մեր թիմակիցներին, հաճախորդներին, բաժնետերերին ու գործընկերներին, ովքեր մեր մեծ թիմի մաս են կազմում:

Արհեստավարժ մասնագետներից կազմված մեր թիմը ամեն օր աշխատում է մեր հաճախորդներին լավագույն պրոդուկտներն ու ծառայությունները մատուցելու և գերազանց փորձառություն ապահովելու առանձնահատուկ պատասխանատվությամբ: Աշխատում ենք՝ նորագույն տեխնոլոգիաների ներդրման միջոցով մարդկանց կյանքն ավելի հեշտացնելու և հարմար դարձնելու առաքելությամբ:

Ընկերության ներսում կարևորում և խրախուսում ենք թիմային աշխատանքն ու միջբաժնային համագործակցությունը, քանի որ հավատում ենք, որ հաջողությունը մեր միասնականության մեջ է: Մենք համախմբվել ենք ընդհանուր արժեքների ու գաղափարների շուրջ, հավատում ու միասին կյանքի ենք կոչում բոլորիս երազանքները:

Մենք կարևորում ենք մեր թիմակիցների զարգացումն ու մասնագիտական աճը՝ մշտապես խրախուսելով և հնարավորություն տալով մեր թիմակիցներին կրթվելու ու զարգանալու տարատեսակ դասընթացների ու աշխատարանների միջոցով:

Մեր միջին և բարձր օղակի ղեկավարների հմտությունների զարգացումը առաջնահերթություն է մեզ համար: Գիտակցելով ժամանակակից դինամիկ բիզնես միջավայրում արդյունավետ առաջնորդության կարևորությունը մեկնարկել ենք միջին օղակի ղեկավարների զարգացման ծրագիրը (the Middle Management Development Program-MMDP), որը նպատակ ունի զարգացնել մեր ղեկավարների կառավարման և առաջնորդության հմտությունները՝ իրենց թիմերին ոգեշնչելու ու կազմակերպչական աճը խթանելու համար:

1.4. Տարվա բիզնես գործունեության արդյունքները

Շարժական կապ

Ընկերության շարժական կապի բաժանորդների թիվը 2023թ.-ին կազմել է 1,044,939 բաժանորդ, աճելով նախորդ տարվա նկատմամբ 9%-ով կամ 86,646 բաժանորդով: Մասնավորապես, զգալիորեն աճել է հեռախոսի միջոցով շարժական ինտերնետ օգտագործող բաժանորդների թիվը՝ 660,731: 2022 թ.-ի համեմատ արձանագրվել է աճ 11.5%-ով:

2023 թ.-ի տվյալների համաձայն ընկերությանը բաժին է ընկնում ՀՀ շարժական կապի շուկայի բաժանորդների 25.6%-ը նախորդ տարվա 24.7%-ի փոխարեն:

2023 թ.-ին շարժական կապի ծառայությունների մատուցումից և սարքավորումների իրացումից ստացված եկամուտները 2022 թ.-ի համեմատ աճել են 1.6%-ով և կազմել 19.4 մլրդ դրամ: «Տելեկոմ Արմենիա»-ին 2023թ.-ին բաժին է ընկել ՀՀ շարժական կապի շուկայի եկամուտների 20.8%:

Ընկերության 4G ցանցի բաժանորդների քանակը ցուցաբերում է կայուն աճ, տեխնոլոգիական առանձնահատկությունից ելնելով, ավելի համեստ աճի տեմպեր է ցուցաբերում 3G ցանցի բաժանորդների քանակը: 2G ցանցի բաժանորդների քանակը, պայմանավորված ժամանակակից տենդենցներով, գնալով նվազում է: Ստորև աղյուսակով ներկայացված է տարբեր տարիներին տարեվերջի դրությամբ Ընկերության շարժական կապի բաժանորդների քանակը ըստ տեխնոլոգիաների.

	2019	2020	2021	2022	2023
2G և 3G ցանցի բաժանորդներ	732,691	668,439	579,806	616,203	680,436
մասնաբաժինը ընդհանուր բաժանորդներում	*77.3%*	*73.9%*	*63.3%*	*64.3%*	*65.1%*
4G ցանցի բաժանորդներ	215,099	236,250	334,430	342,090	364,503
մասնաբաժինը ընդհանուր բաժանորդներում	*22.7%*	*26.1%*	*36.5%*	*35.7%*	*34.9%*

Շարժական ինտերնետից (տվյալների հաղորդման ծառայություններից) օգտվող բաժանորդների քանակը վերջին տարիներին կայուն աճել է՝ հասնելով ընդհանուր բաժանորդների թվի 71.1%-ին: Ստորև աղյուսակով ներկայացված է շարժական ինտերնետի բաժանորդների քանակի դինամիկան ըստ տարիների.

	2019	2020	2021	2022	2023
շարժական ինտերնետ բաժանորդներ, որից	554,366	557,966	618,206	671,960	743,296
մասնաբաժինը ընդհանուր բաժանորդներում	*58.5%*	*61.7%*	*67.5%*	*70.1%*	*71.1%*
բացառությամբ հեռախոսասարքի միջոցով օգտվողների	54,435	55,531	59,284	79,314	82,565
հեռախոսասարքի միջոցով օգտվողների	499,931	502,435	558,922	592,646	660,731

Ընկերությունը, հավատարիմ մնալով իր որդեգրած քաղաքականությանը, 2023թ.-ին ևս շարունակեց տրամադրել իր բաժանորդներին որակյալ կապ, առաջարկելով հարմարավետ փաթեթներ և նոր ծառայություններ: Հիմնական առաջարկները ուղղված էին համակցված փաթեթների օգտագործողների քանակի ներթափանցելիության աճին և առաջխաղացմանը, շարժական ինտերնետի որակյալ ծառայությունների մատուցմանը:

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն առաջինը ինտերնետ և հեռախոսակապ ապահովեց Արցախից բռնի տեղահանվածներին, տրամադրելով հատուկ սակագնային փաթեթ 6 ամիս ժամկետով 1 դրամ ամսական վճարով:

Առաջինը Հայաստանի հեռահաղորդակցության ոլորտում Ընկերությունը 2023թ.-ին գործարկեց նորարական Team Energy նախագիծը, որտեղ հատվում են հեռահաղորդակցությունը, էներգետիկան և էկոլոգիան: Այս նախագիծը հնարավորություն է տալիս խթանել և հեշտացնել էլեկտրական մեքենաների օգտագործումը Հայաստանում՝ զգալիորեն կրճատելով օդի աղտոտվածությունը և տրանսպորտային ծախսերը: Team Energy էլեկտրական մեքենաների լիցքավորման կայանների ցանցն արդեն հասանելի է ՀՀ ողջ տարածքում: Իսկ Team Energy հավելվածի միջոցով հնարավոր է գտնել մոտակա լիցքավորման կետերը, կատարել լիցքավորում և վճարել բանկային քարտի միջոցով, իսկ «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ բաժանորդ լինելու դեպքում՝ նաև Team-ի հեռախոսահամարի հաշվեկշռից:

Ամրակցված կապ

2023 թ.-ին «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի ամրակցված կապի ծառայությունների մատուցումից և սարքավորումների իրացումից ստացված եկամուտը կազմել է 12.6 մլրդ դրամ:

Ամրակցված ինտերնետի բաժանորդների թիվը 2023 թ.-ի դրությամբ 94.8 հազար է, ինչը 2%-ով ավել է 2022 թ.-ի համեմատ:

2023 թ.-ի արդյունքում «Տելեկոմ Արմենիա»-ին բաժին է ընկնում ամրակցված ինտերնետի շուկայի բաժանորդների 32.1%-ը, նաև ամրակցված ինտերնետի շուկայի ծառայություններից ստացված եկամուտների 23.1%-ը:

Ընկերությունը շարունակում է նոր գերարագ FTTH ցանցի ընդլայնումը ՀՀ ողջ տարածքում: FTTH ցանցի հասանելությամբ ապահովված տնային տնտեսությունների քանակը 2023թ.-ի վերջի դրությամբ կազմել է 225 հազար:

Ամրակցված կապի բաժանորդներ

2023թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ամրակցված կապի բաժանորդների քանակը կազմել է 296,448, որը նախորդ տարվա ցուցանիշի նկատմամբ նվազել է 9%-ով՝ հիմնականում պայմանավորված ձայնային ծառայություններից օգտվող բաժանորդների քանակի նվազմամբ:

Ձայնային ծառայություններից օգտվող բաժանորդների քանակի նվազումը հիմնականում պայմանավորված է բաժանորդների՝ ամրակցված կապից դեպի շարժական կապ միգրացիայով, ինչպես նաև OTT ձայնային պլատֆորմների ընդլայնվող հասանելիությամբ: Ձայնային

ծառայություններից օգտվող բաժանորդների 84%-ը բաժին է ընկնում անհատներին, իսկ մնացածը՝ Ընկերություններին և պետական կառույցներին:

Ստորև աղյուսակով ներկայացված է ամրակցված ինտերնետ հասանելիության ծառայություններից օգտվող բաժանորդների քանակի բացվածքը ըստ տեխնոլոգիաների[2].

	2019	2020	2021	2022	2023
ինտերնետ հասանելիության ծառայություններից օգտվող բաժանորդներ, որից	110,201	105,810	99,515	92,907	94,772
ADSL տեխնոլոգիայով	83,856	71,065	53,056	39,184	31,099
մասնաբաժինը ընդհանուր ինտերնետ բաժանորդներում	*76%*	*67%*	*53%*	*42%*	*33%*
VDSL տեխնոլոգիայով	9,035	14,039	19,955	22,748	19,757
մասնաբաժինը ընդհանուր ինտերնետ բաժանորդներում	*8%*	*13%*	*20%*	*24%*	*21%*
FTTB տեխնոլոգիայով	14,711	19,326	24,353	23,767	23,543
մասնաբաժինը ընդհանուր ինտերնետ բաժանորդներում	*13%*	*18%*	*24%*	*26%*	*25%*
FTTH տեխնոլոգիայով	-	-	1,251	6,731	20,073
մասնաբաժինը ընդհանուր ինտերնետ բաժանորդներում	*-*	*-*	*1%*	*7%*	*21%*
այլ տեխնոլոգիաներով	2,599	1,380	900	477	300
մասնաբաժինը ընդհանուր ինտերնետ բաժանորդներում	*2%*	*1%*	*1%*	*1%*	*0%*

Դիտարկված պատմական ժամանակաշրջանում ամրակցված ինտերնետի բաժանորդների թվում ADSL տեխնոլոգիայով բաժանորդների քանակը նվազել է տարեկան 22% միջին տեմպով (CAGR): Նույն ժամանակաշրջանում VDSL և FTTB տեխնոլոգիայով ինտերնետի բաժանորդների քանակը աճել է համապատասխանաբար 22% և 13% տարեկան միջին տեմպով (CAGR):

ADSL տեխնոլոգիայով բաժանորդների մասնաբաժինը ամրակցված ինտերնետի բաժանորդների քանակում 2023թ.-ի ժամանակաշրջանի վերջի դրությամբ կազմել է 33%, որը 2022թ.-ի ցուցանիշից պակաս է 9 տոկոսային կետով: Փոխարենը աճում են VDSL, FTTB և FTTH տեխնոլոգիայով ինտերնետի բաժանորդների մասնաբաժինները:

Ընկերության հեռուստատեսության ծառայության բաժանորդների քանակը վերջին տարիներին գրանցել է զգալի աճ. դիտարկված պատմական ժամանակաշրջանում վերջինս աճել է տարեկան միջինում 58%-ով (CAGR):

Ստորև աղյուսակով ներկայացված է հեռուստատեսության ծառայության բաժանորդների տարանջատումը՝ ըստ ինտերնետ հասանելիության տեխնոլոգիաների.

[2] **Աղբյուր՝** Ընկերության տվյալներ

	2019	2020	2021	2022	2023
հեռուստատեսության ծառայության բաժանորդներ, որից	6,741	14,341	21,228	27,297	41,514
ADSL տեխնոլոգիայով	2,379	2,579	2,478	2,211	1,419
մասնաբաժինը ընդհանուր հեռուստատեսության բաժանորդներում	*35%*	*18%*	*12%*	*8%*	*3%*
VDSL տեխնոլոգիայով	2,227	5,467	9,375	10,312	9,748
մասնաբաժինը ընդհանուր հեռուստատեսության բաժանորդներում	*33%*	*38%*	*44%*	*38%*	*23%*
FTTB տեխնոլոգիայով	2,135	6,295	8,518	10,307	11,434
մասնաբաժինը ընդհանուր հեռուստատեսության բաժանորդներում	*32%*	*44%*	*40%*	*38%*	*28%*
FTTH տեխնոլոգիայով	-	-	857	4,467	18,913
մասնաբաժինը ընդհանուր հեռուստատեսության բաժանորդներում	-	-	*4%*	*16%*	*46%*

Հարկ է նշել, որ Ընկերությունը տնային հեռուստատեսության ծառայություններ մատուցում է միայն ամրակցված կապի փաթեթների (ինտերնետի, հեռախոսակապի ծառայությունների հետ մեկտեղ) կամ համակցված (ինտերնետի, հեռախոսակապի և շարժական կապի ծառայությունների հետ մեկտեղ) փաթեթների շրջանակներում:

Գնալով ավելի շատ ինտերնետ հասանելիության բաժանորդներ են օգտվում տնային հեռուստատեսության ծառայություններից: 2023թ.-ին հեռուստատեսության ծառայության բաժանորդների քանակը գրանցել է 52% տարեկան աճ 2022թ.-ի համեմատ:

	2019	2020	2021	2022	2023
հեռուստատեսության ծառայության բաժանորդներ, որից	6%	14%	21%	29%	44%
ADSL բաժանորդներ	3%	4%	5%	6%	5%
VDSL բաժանորդներ	25%	39%	47%	45%	49%
FTTB բաժանորդներ	15%	33%	35%	43%	49%
FTTH բաժանորդներ	-	-	69%	66%	94%

Տոկոսային առումով ամենամեծ մասնաբաժինը պատկանում է FTTH ինտերնետ բաժանորդներին՝ 2023թ.-ին կազմելով վերջինիս 94%-ը: Ցուցանիշը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ FTTH գերարագ օպտիկամանրաթելային ցանցը թույլ է տալիս մատուցել ժամանակակից IPTV ծառայություններ:

Ընկերությունը իր բաժանորդներին առաջարկում է նաև մի շարք թվային ծառայություններ:

Ընկերության բաժանորդները հնարավորություն ունեն կոմունալ և այլ ծառայությունների դիմաց վճարումներ կատարել «Թիմ Փեյ» ՓԲԸ վճարահաշվարկային ընկերության գրասենյակներում, որոնք գործում են Ընկերության մասնաճյուղերում:

Շարժական կապի բաժանորդները հնարավորություն ունեն Team Energy հավելվածի միջոցով իրենց բջջային հեռախոսահամարի հաշվեկշռից լիցքավորել էլեկտրական մեքենաները 40-ից ավել լիցքավորման կայաններում:

Ընկերության բաժանորդների համար գործում է նաև Team Բոնուս խրախուսական ծրագիրը, որը հնարավորություն է տալիս կատարված ծախսերի դիմաց կուտակել բոնուսային միավորներ և դրանք փոխանակել մի շարք ծառայություններով (բջջային ինտերնետի փաթեթներ, որպեներ և հատուկ առաջարկներ գործընկերների հետ համագործակցելով):

1.5.Ձեռնարկատիրական գործունեության հետ կապված գլխավոր փոփոխությունները

Կազմակերպաիրավական ձևի փոփոխություն / IPO

Ընկերությունը փոխել է իր կազմակերպաիրավական ձևը՝ 2023 թվականի ապրիլի 11-ին փակ բաժնետիրական ընկերությունից վերակազմավորվելով բաց բաժնետիրական ընկերության: Վերակազմավորման նպատակներից էր բաժնետոմսերի առաջնային հրապարակային տեղաբաշխում իրականացնելը:

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն դարձավ հեռահաղորդակցության ոլորտի առաջին ընկերությունը Հայաստանում, որի բաժնետոմսերն առաջնային հրապարակային տեղաբաշխման միջոցով ցուցակվեցին ֆոնդային բորսայում: Տեղաբաշխվեց 8 միլիարդ 240 միլիոն դրամ ընդհանուր արժողությամբ 40 միլիոն բաժնետոմս:

Ընկերության բաժնետերեր են դարձել շուրջ 1000 ֆիզիկական ու իրավաբանական անձինք, էական ծավալի ներդրումներ են իրականացրել ինստիտուցիոնալ ներդրողները: Վերջիններից է «Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» ընկերությունը, որն իր առաջին ուղղակի ներդրումն է կատարել հայաստանյան բաժնետոմսերում: Այս գործարքի շնորհիվ ֆոնդի մոտ 400 հազար շահառու անուղղակի կերպով դարձել է «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի բաժնետեր: «Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» -ի ներդրումը կազմել է տեղաբաշխվող բաժնետոմսերի ընդհանուր ծավալի 20%-ը, որը համարժեք է 1 միլիարդ 648 միլիոն ՀՀ դրամին:

Առաջարկվող բաժնետոմսեր	«Ա» դասի հասարակ բաժնետոմսեր
Մեկ բաժնետոմսին տրվող ձայների քանակ	1 ձայն
Բաժնետոմսերի քանակ	40,000,000 հատ
Մեկ բաժնետոմսի գին	206 ՀՀ դրամ
Առաջարկի ընդհանուր ծավալ	8,240,000,000 ՀՀ դրամ
Տեղաբաշխման ժամկետ	Հունիսի 7 – հոկտեմբերի 31
Տեղաբաշխող	Ամերիաբանկ ՓԲԸ

Ընկերության հրապարակային տեղաբաշխված «Ա» դասի հասարակ, անվանական բաժնետոմսերը ցուցակված են «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ կողմից:

Ներգրավված միջոցներն ընկերությունը ուղղում է Հայաստանի ողջ տարածքում օպտիկամանրաթելային NGN ցանցի ընդլայնմանը, բջջային ցանցում 5G տեխնոլոգիայի ներդրմանը և միջազգային նոր կապուղիների ակտիվացմանը: Աշխատելով թվային տեխնոլոգիաների ոլորտում՝ Ընկերությունը նաև մեծ ուշադրություն է դարձնում ժամանակակից թվային գործիքների ու լուծումների ներդրմանը և այլ հավակնոտ ծրագրերի իրականացմանը:

1.6.Բնապահպանական և սոցիալական ցուցանիշներ

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն իր գործունեությունն իրականացնելիս առաջնորդվում է ոչ միայն շրջակա միջավայրի, սոցիալական պատասխանատվության և աշխատանքային անվտանգության ապահովման վերաբերյալ ՀՀ ներպետական օրենսդրությամբ, այլև սկսած 2022 թվականից մշակել և ներդրել է ՎՁԵԲ և ՄՖԿ Կատարողական Ստանդարտներին համահունչ գործառնական համակարգ, որի ներքո գործում է հետևյալ փաստաթղթային շրջանակը՝

1. Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Պլան
2. ԲՍԿՀ Ձնման ընթացակարգ և Ռիսկերի գրանցամատյան
3. Շահառուների ներգրավման պլան
4. Մտահոգությունների բարձրաձայնման Speak Up հարթակ (բողոքարկման մեխանիզմի և չհետապնդելու քաղաքականություն)
5. Բիզնես գործընկերների Վարքագծի կանոնակարգ և Կոմպլայենսի դրույթներ
6. Բիզնես Գործընկերների Ստուգման ընթացակարգ
7. Կաշառակերության և կոռուպցիայի կանխարգելման քաղաքականություն
8. Սեռական ոտնձգությունների բացառման քաղաքականություն
9. Անչափահասների աշխատանքի կանխարգելման քաղաքականություն
10. Հարկադիր աշխատանքի բացառման քաղաքականություն
11. Աշխատավորների միությունների խրախուսման քաղաքականություն
12. Գենդերային խտրականությունների բացառման քաղաքականություն
13. Համայնքների անվտանգության և առողջության պահպանման քաղաքականություն

14. Աշխատանքային անվտանգության և առողջության ապահովման քաղաքականություն և կառավարման պլան (ներառյալ ուսուցման, հետաքննությունների անցկացման կարգեր)
15. Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման քաղաքականություն
16. Անվտանգության կառավարման պլան
17. Արտակարգ իրավիճակների պատրաստվածության և արձագանքման պլան

Վերոնշյալ փաստաթղթային շրջանակը վերանայվում և բարեփոխումների է ենթարկվում տարեկան կտրվածքով, իսկ ոլորտի խնդիրների բացահայտման կամ արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում նաև ըստ անհրաժեշտության: Ընկերության բոլոր ստորաբաժանումների ղեկավարները և աշխատակիցները առանձնացված կամ համատեղված գործառույթներով ներառված են վերոնշյալ գործառնական համակարգի իրականացման ողջ գործընթացում:

Տարեկան բնապահպանական ցուցանիշների ամփոփ ներկայացում

Ածխածնային արտանետումներ (CO2) և էներգաարդյունավետություն

2023թ.-ի ընթացքում «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ին պատկանող շինությունները վերազինվել են թվով 8 արևային ֆոտովոլտային կայաններով, ինչի շնորհիվ արևային արտադրանքի մասնաբաժինը ընդհանուր էներգասպառման մեջ ավելացել է՝ նախորդ տարիների 0.21%-ից՝ հասնելով 3%, միևնույն ժամանակ գրանցելով շուրջ 7% աճ նախորդ տարվա նկատմամբ:

Ընկերությունը շարունակում է այլընտրանքային էներգիայի աղբյուրների ներդրման գործընթացը, նպատակ ունենալով հնարավորինս նվազեցնել ավանդական էներգիայի աղբյուրների և դրանով պայմանավորված ածխածնային արտանետումների ծավալը:

Մարդատար մեքենաների ավտոպարկում էլեկտրական մեքենաների մասնաբաժինը 2023թ.-ին կազմել է 14%՝ նույնքանով նվազեցնելով վառելիքի այրման արդյունքում արտանետվող ածխածնային արտանետումները: Ընկերության վարչական գրասենյակներում շարունակվում է էներգաարդյունավետ լուսավորության անցկացումը:

ՀՀ մարզերում պղնձե մալուխների օպտիկամանրաթելային ցանցի մալուխներով փոխարինելու արդյունքում Ընկերությունը չի արտանետել 215 tCO2 ածխածնի երկօքսիդ, միևնույն ժամանակ նվազեցնելով նախորդ

տարվա ածխածնային արտանետումները շուրջ 0.3%-ով: Հարկ է նշել, որ վերոնշյալ խնայողությունները կատարվել են Ընկերության գործունեության ընդլայնմանն ու ակտիվ տեխնիկական վերազինմանը զուգընթաց՝ ապահովելով կայուն աճ:

Թափոնների կրճատում և նյութերի շրջանառու համակարգ

2023թ. ընթացքում Ընկերության գրասենյակային թղթի վերամշակման ծավալներն աճել են 36%-ով՝ կազմելով 3600 կգ նախորդ տարվա 2300 կգ նկատմամբ: Միևնույն ժամանակ կնքվել է համագործակցության հուշագիր Երևանի քաղաքապետարանի հետ՝ Ընկերությունում առաջացող կենցաղային նշանակության ստվարաթղթի տեղափոխման և վերամշակման վերաբերյալ: Շնորհիվ ներդրված E-sim և E-pen տեխնոլոգիաների տարվա ընթացքում հնարավոր է եղել խուսափել 586 կգ պլաստիկի առաջացումից, որը նախորդ տարվա ցուցանիշի նկատմամբ աճել է 57%-ով: Նյութերի շրջանառու համակարգի ներդրմամբ կրկնօգտագործման է հանձնվել 11,408 կգ մետաղյա ջարդոն՝ 20%-ով ավելի նախորդ տարվա նկատմամբ, ինչպես նաև 34.41 խմ փայտանյութ՝ 79%ով ավելի նախորդ տարվա նկատմամբ: Թվով 14,146 հեռահաղորդակցության սարքեր վերանորոգվել, արդիականացվել և կրկնօգտագործվել են:

Բնապահպանական նախաձեռնություններ և իրազեկվածության բարձրացում

2023թ. ընթացքում «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն միացել է բնապահպանական օրացույցի թվով երկու ամենակարևոր միջոցառումներին՝ ապրիլի 22-ին նշվող Երկրի օրվան և հունիսի 5-ին նշվող Շրջակա միջավայրի պահպանության միջոցառումներին:

Վերոնշյալ օրերին Ընկերության արտաքին և ներքին լսարանի համար կազմակերպվել են բնապահպանական իրազեկվածության բարձրացմանն ուղղված նախաձեռնություններ՝ հանրության ուշադրությունը սևեռելով Երկրի հիմնական բնապահպանական մարտահրավերներին և դրանց լուծման եղանակներին:

Ընկերության կայուն զարգացման վերաբերյալ հանձնառությունը նաև արտացոլված է Ընկերության պաշտոնական կայք էջում և հասանելի է հետևյալ հղումով՝

https://www.telecomarmenia.am/hy/sustainable-development/

Աշխատանքի անվտանգություն և առողջության պահպանում

Հաշվետու տարվա ընթացքում ընկերության աշխատակիցների շրջանում

- մահվան ելքով պատահարներ չեն գրանցվել,
- սննդով պայմանավորված թունավորումներ չեն գրանցվել,
- համաճարակային իրավիճակներ չեն գրանցվել,
- ԷՄԴ ճառագայթման դեպքեր չեն գրանցվել:

Մտահոգությունների բարձրաձայնման Speak UP հարթակով ստացվել է թվով 4 բողոք տարբեր շահառուներից, որոնք դիտարկվել և քննարկվել են ըստ գործող ընթացակարգի և խնդիրներին տրվել են համապարփակ լուծումներ: Բողոքների կրկնման դեպքեր հաշվետու տարում չեն գրանցվել:

Վարվելակերպի կանոններ

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն արժևորում է բաց, ազնիվ և թափանցիկ գործարար հարաբերություններն ու փոխադարձ վստահությունը բոլորի՝ հաճախորդների, աշխատակիցների, գործընկերների և բաժնետերերի հետ: Այդ մշակույթի պահպանումն ապահովելու նպատակով էլ Ընկերությունում ներդրված են կորպորատիվ էթիկայի և կոմպլայենսի միջազգային բարձրագույն ստանդարտներ: Դրանք ամփոփված են մի շարք էթիկական ուղեցույցներում, որոնք հստակ նկարագրում են մեր գործունեության չափորոշիչները և ակնկալիքները:

Մեր բարոյական սկզբունքները և վարվելակերպի ստանդարտները արտացոլված են Ընկերության «Վարվելակերպի կանոնակարգում», որը հանդիսանում է Ընկերության արժեքների հիմնարար ուղեցույցը: Մեր բոլոր աշխատակիցները՝ անկախ զբաղեցրած հաստիքից և պատասխանատվության սահմաններից, ինչպես նաև բոլոր երրորդ անձինք, ովքեր հանդես են գալիս Ընկերության անունից, պարտավոր են հետևել Կանոնակարգի պահանջներին:

2.ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2.1.Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը



Հավելված 1
«Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ տնօրենների խորհրդի
08.04.2024 թ. -ի նիստի արձանագրության



2.2.Խորհրդի անդամներ

Ալեքսանդր Եսայան

Պաշտոն՝ **Խորհրդի նախագահ**

Մասնագիտություն՝

ՄՖԲ ֆինանսական ակադեմիա, «Ֆինանսներ և վարկեր», Տնտեսագետի որակավորում

Նախորդ 5 տարվա ընթացքում զբաղեցրած ղեկավար պաշտոններ՝

- «Մանդալ Էյ Այ» ՍՊԸ, գործադիր տնօրեն, 2021թ.-ից
- «ԹԻՄ» ՓԲԸ, Գլխավոր տնօրենի խորհրդական ռազմավարության մասով, 2021թ.-ից
- «Տեղեկատվական տեխնոլոգիաների և ծառայությունների համաշխարհային ընկերակցություն» (WITSA), տնօրենների խորհրդի անդամ, 2018թ.-ից
- «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» նախագահ, 2015թ.-ից
- «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան», հոգաբարձուների խորհրդի անդամ, 2020թ.-ից
- «Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ», հոգաբարձուների խորհրդի պատվավոր նախագահ, 2022թ.-ից
- «Յուքոմ» ՍՊԸ փոխտնօրեն, 2007 2020թթ.

Հայկ Եսայան

Պաշտոն՝ **Խորհրդի անդամ, Գլխավոր տնօրեն**

Մասնագիտություն՝

ՀՊՃՀ «Հաշվողական մեքենաներ, համալիրներ և ցանցեր», Ճարտարագիտության բակալավրի աստիճան

ՀՊՃՀ, «Ինֆորմատիկա և կոմպյուտերային համակարգեր», մագիստրոսի աստիճան

ՄՖԲ ֆինանսական ակադեմիա, «Ֆինանսներ և վարկեր», Տնտեսագետի որակավորում

Նախորդ 5 տարվա ընթացքում զբաղեցրած ղեկավար պաշտոններ՝

- «ԹԻՄ» ՓԲԸ, գլխավոր տնօրեն, 2020թ.-ից առ այսօր
- «Թիմ հոլդինգ» ՓԲԸ, գլխավոր տնօրեն, 2021թ.-ից
- «Թիմ Փեյ» ՓԲԸ, տնօրենների խորհրդի նախագահ, 2021թ.-ից
- «Կողբ» հիմնադրամում հոգաբարձուների խորհրդի անդամ, 2013թ.-ից
- «Յուքոմ» ՍՊԸ խորհրդի անդամ, գլխավոր տնօրեն, 2007 2020թթ.
- «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ, գլխավոր տնօրեն, 2020թ.-ից առ այսօր

Արամ Բարսեղյան

Պաշտոն՝ **Խորհրդի անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ**

Մասնագիտություն՝

ԵՊՀ, «Արևելագիտության ֆակուլտետ», Արաբագետի որակավորում, Մագիստրոսի աստիճան

Շեֆիլդի համալսարան, «Բիզնես կառավարում», Մագիստրոսի աստիճան

Նախորդ 5 տարվա ընթացքում զբաղեցրած ղեկավար պաշտոններ՝

- «Թիմ Փեյ» ՓԲԸ, խորհրդի անդամ, 2020թ.-ից
- «Յուքոմ» ՍՊԸ, կոմերցիոն տնօրեն, 2011 – 2020թթ.

Ալբերտ Տոնեյան

Պաշտոն՝ **Խորհրդի անկախ անդամ**

Մասնագիտություն՝

ԵՊՀ, «Ֆիզիկայի ֆակուլտետ» բակալավրի աստիճան

Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարան «Ֆիզիկայի ֆակուլտետի ասպիրանտուրայի բաժին»

Գիտական աստիճանը՝ Ֆիզ-մաթ գիտությունների թեկնածու:

Նախորդ 5 տարվա ընթացքում զբաղեցրած ղեկավար պաշտոններ՝

- «Վեբ» ՍՊԸ, տնօրեն, 1996թ.-ից
- «Լիր» ՍՊԸ, տնօրեն, 2018թ.-ից
- «Ինտերնետ հասարակություն» ՀԿ խորհրդի անդամ և փոխնախագահ, 1995թ.-ից
- «ՀՀ ինտերնետ կառավարման համաժողովի» անդամ
- «Արմիքս» հիմնադրամ, նախագահ, 2010թ.-ից

Արտավազդ Մինասյան

Պաշտոն՝ **Խորհրդի անկախ անդամ**

Մասնագիտություն՝ **ԵՊՀ, «Ֆիզիկայի ֆակուլտետ» բակալավրի աստիճան**

ԵՊՀ, «Ֆիզիկայի ֆակուլտետ», մագիստրոսի աստիճան

ՀԱՀ, «Գործարար վարչարարության», մագիստրոսի կոչում

ԵՊՀ, «Մաթեմատիկայի ֆակուլտետ», գիտական աստիճան

Նախորդ 5 տարվա ընթացքում զբաղեցրած ղեկավար պաշտոններ՝

- «Քրիսփ Թեքնոլոջիս» ՍՊԸ (“Krisp Technologies” LLC), տնօրինության նախագահ, 2017թ.-ից
- «ԹենՎեբ» ՍՊԸ, տնօրինության նախագահ, 2017թ.-ից
- «ԲիգՍթորի ՎիՍԻ», հիմնական մասնակից (general partner), 2021թ.-ից

2.3.Ռիսկային գործոնները

Ստորև ներկայացված են այն ռիսկերը, որոնք Ընկերությունը հաշվետվության ներկայացման պահի դրությամբ համարում է էական, սակայն կարող են լինել լրացուցիչ ռիսկեր, որոնք Ընկերությանը այս պահին հայտնի չեն կամ Ընկերությունը դրանք համարում է ոչ էական.

1. Մրցակցային ռիսկ

Ընկերության գործունեության՝ հեռահաղորդակցության շուկայում առկա է մրցակցություն և ժամանակ առ ժամանակ հնարավոր է դրա սրացում, ինչը կարող է բացասական ազդեցություն ունենալ Ընկերության գործառնական և/կամ ֆինանսական ցուցանիշների վրա:

Վերջին տարիներին հեռահաղորդակցության ոլորտում աճել է պահանջարկը համակցված (կոնվերգենտ) փաթեթային առաջարկների նկատմամբ, որոնք ներառում են երկու կամ ավել ամրակցված և շարժական կապի ծառայություններ: Ընկերության ամրակցված և շարժական ենթակառուցվածքների համակցությունը համարվում է լավագույններից մեկը, ինչը թույլ է տալիս շուկայում ներկայացնել համակցված (կոնվերգենտ) փաթեթների գրավիչ առաջարկներ: Բացառված չէ, որ մրցակիցները ինչ-որ պահի նույնպես ձգտեն բարելավել իրենց համակցված (կոնվերգենտ) փաթեթների առաջարկները: Կոնվերգենտ ծառայությունների մատուցման շուկայում Ընկերության հիմնական մրցակիցն է «Յուքոմ» ՓԲԸ-ն: «Վիվա Արմենիա» ՓԲԸ-ն, համագործակցելով «Fnet Telecom»-ի հետ, նս առաջարկում է կոնվերգենտ փաթեթներ:

Հեռահաղորդակցության շուկայի բոլոր խաղացողները, այդ թվում և Ընկերությունը, ստիպված են մրցակցել նաև ձայնային ծառայություններին այլընտրանք առաջարկող «Skype», «WhatsApp», «Viber», «Facebook Messenger» և այլ նմանատիպ OTT ծառայություններ առաջարկող ընկերությունների հետ, ինչպես նաև հեռուստատեսային և ժամանցային բովանդակություն ունեցող հարթակների հետ:

Վերոնշյալ մրցակցային ռիսկը նվազեցնելու նպատակով Ընկերությունը այժմ կառուցում է տարածաշրջանում եզակի՝ 25 Գբ/վ արագությամբ 25G-PON տեխնոլոգիայով NGN (Next Generation Network) FTTH (Fiber to the Home - Օպտիկա մինչև բնակարան) օպտիկամանրաթելային ցանց:

Ընկերության գործունեության վրա որոշակի բացասական ազդեցություն կարող են ունենալ մրցակիցների հետևյալ գործողությունները՝

- ցածր (դեմպինգային) գները որպես գնային պատերազմների (price wars) հետևանք,
- ցանցերի ավելի արագ ընդլայնումը մրցակիցների կողմից:

Ընկերության դիրքը շուկայում կախված է նաև Ընկերության կողմից իրականացվող մարքեթինգային նախաձեռնություններից, առաջարկվող փաթեթներից և ծառայություններից, նոր առաջարկներից և իրականացվող ռազմավարությունից: Ընկերությունն ունի հմուտ և փորձառու կոմերցիոն թիմ, որն, արագ արձագանքելով շուկայի և հաճախորդների նախասիրությունների ու վարքագծի փոփոխություններին, ապահովում է Ընկերության մրցակցային առավելությունը:

2. Տեխնոլոգիական զարգացումներ

Տեխնոլոգիական արագ զարգացումները կարող են նպաստել մրցակցության աճին, ինչպես նաև Ընկերության և առկա մրցակիցների տեխնոլոգիաների արդիականության հնարավոր կորստին:

Մրցունակ լինելու նպատակով Ընկերությանը կարող է անհրաժեշտ լինել ներդրումներ կատարել իր ենթակառուցվածքների արդիականացման կամ լիցենզիաների/թույլտվությունների ձեռք բերման և նոր տեխնոլոգիաների զարգացման և ներդրման համար: Այս ներդրումներն իրականացնելու ծախսը կարող է լինել էական, և չի բացառվում, որ ժամանակ պահանջվի շուկայում նոր տեխնոլոգիան դրամայնացնելու (monetizing) համար: Տվյալ ռիսկը առկա է շուկայի բոլոր խոշոր խաղացողների համար:

3. Կապիտալ ծախսերի և շրջանառու կապիտալի հետ կապված ծախսեր

Ընկերության գործունեության ոլորտն իր տեսակով ծախսատար է, և իր մրցակցային դիրքը պահպանելու և/կամ առավել բարելավելու համար Ընկերությունը իրականացնում է մեծ ծավալի կապիտալ և շրջանառու կապիտալի ներդրումներ: Մասնավորապես Ընկերության առկա ենթակառուցվածքների (օպտիկամանրաթելային և բջջային ցանցերի) ընդլայնումը և շահագործումը պահանջում են ծավալուն կապիտալ ներդրումներ:

Վերջին տարիներին Ընկերությունը զգալի ներդրումներ է կատարել հաճախորդների ներգրավման և պահպանման համար, ներառյալ՝ սարքավորումների ձեռքբերման և տեղադրման ծախսերը, նոր տեխնոլոգիաների (ինչպես օրինակ GPON-ի ներդրումը), ինչպես նաև գոյություն ունեցող ցանցերի արդիականացումը (ինչպիսին է օրինակ FTTB/FTTH ցանցի ներդրումը): Ընկերության կապիտալ ներդրումների հիմնական խոշոր ուղղություններն են՝

- Ընկերության ամրակցված օպտիկամանրաթելային ցանցի ընդլայնում,
- Ընկերության բջջային ցանցի ընդլայնում և զարգացում,
- Բաժանորդային սարքավորումների (CPE) և նոր հաճախորդների ձեռքբերման հետ կապված ծախսեր,
- հեռահաղորդակցության լիցենզիաների և թույլտվությունների հետ կապված վճարներ,
- հեռարձակման իրավունքների ձեռքբերում:

Ընկերությունն իր կապիտալ ծախսերը և շրջանառու կապիտալի կարիքը ֆինանսավորելու նպատակով օգտագործում է գործառնական գործունեությունից առաջացած դրամական միջոցների, ֆինանսական պարտավորությունների և այլ ֆինանսական գործիքների համակցությունը:

Ընկերության իրացվելիության և կապիտալի պահանջները կարող են աճել, եթե ընդլայնվեն գործունեության ոլորտները և արագացվեն աճի տեմպերը:

4. Տնտեսական, քաղաքական, և սոցիալական ռիսկեր

Ընկերության, ինչպես նաև մրցակիցների և առհասարակ ոլորտի հաջողությունը սերտորեն կապված է ՀՀ-ում ընդհանուր տնտեսական զարգացումների հետ: ՀՀ տնտեսական վիճակի վատթարացումը կարող է բացասական ազդեցություն ունենալ հաճախորդների վճարունակության և սպառման օրինաչափությունների վրա: Արդյունքում հնարավոր է, որ բաժանորդների մի մասը սահմանափակի Ընկերության որոշ ծառայությունների սպառումը, ինչի հետևանքով կարող է նվազել մեկ բաժանորդին ընկնող միջին հասույթի (ARPU) ներկա մակարդակը:

Գործունեության իրականացման համար անհրաժեշտ ծախսերի աճը, մասնավորապես, Հայաստանում աշխատավարձերի աճը կարող է հանգեցնել Ընկերության գործառնական ծախսերի աճի:

Ի լրումն, ՀՀ քաղաքական վիճակի հետ կապված որևէ անորոշություն կամ անկայունություն, ներառյալ քաղաքական ռեժիմի, իրավական և կարգավորող նորմերի կամ կառավարման օրինակարգերի փոփոխությունը, կարող է բացասական ազդեցություն ունենալ բիզնեսի և գործառնությունների վրա:

Հարկ է նշել, որ Ընկերությունը աշխարհաքաղաքական անկայունության պայմաններում մշտապես փնտրում է այլընտրանքային աճի ուղիներ և հնարավորություններ՝ դրանով մեղմացնելով վերոնշյալ հնարավոր բացասական ազդեցությունը:

5. Ցանցային ռիսկեր

Ընկերության բջջային կապի ծառայությունների, ամրկացված ինտերնետի և հեռախոսակապի, ինչպես նաև հեռուստատեսության ծառայությունների մատուցումն իրականացվում է սեփական հաղորդման ցանցերի միջոցով: Բացի այդ, Ընկերության տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգը ներառում է բազմաթիվ ներկապակցված համակարգեր, որոնք պարբերաբար թարմացվում, արդիականացվում, բարելավվում և ինտեգրվում են նոր համակարգերին:

Ընկերության՝ ծառայություններ մատուցելու կարողությունը կախված է իր ցանցերի շարունակական և անխափան աշխատանքից, համակարգերի թարմացումներից: Չի կարելի բացառել վերջիններիս բնականոն աշխատանքի հնարավոր կարճաժամկետ խափանումները:

Աղետներից վերականգնման, անվտանգության և ծառայության շարունակականության պահպանման միջոցառումները, որոնք Ընկերությունը ձեռնարկել է կամ կարող է ապագայում ձեռնարկել, այդ թվում նաև ցանցի աշխատանքի մոնիտորինգը, կարող են ինչ-որ պահի անբավարար լինել կորուստները կանխելու համար:

Խափանումները կարող են բացասական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության վրա:

6. Անձնակազմի հետ կապված ռիսկեր

Ընկերության արդյունավետ շարունակական աշխատանքը կախված է առանցքային ղեկավար անձնակազմի և աշխատակիցների փոխադարձ համագործակցությունից:

Բարձր որակավորում ունեցող ղեկավար անձնակազմի ներգրավման համար մրցակցությունը հեռահաղորդակցման ոլորտում բավականին մեծ է: Ընկերության ապագա գործառնական արդյունքները մեծապես կախված են առկա ղեկավար կազմի արհեստավարժությունից և Ընկերության՝ ղեկավար անձնակազմը բարձր որակավորում ունեցող մասնագետներով համալրելու ունակությունից:

Ընկերությունը մշտապես աշխատում է համակարգային մոտեցումների ներդրման ուղղությամբ, որպեսզի նվազեցվի Ընկերության գործունեության և հեռանկարային զարգացումների վրա անհատի դերը/ազդեցությունը և Ընկերության ղեկավար անձնակազմի որևէ առանցքային անդամի աշխատանքային հարաբերությունների դադարեցումը էական ազդեցութուն չունենա Ընկերության անխափան գործունեության, գործառնական արդյունքների վրա:

Հարկ է նշել, որ Ընկերության ռազմավարության ուղղվածությունը կարող է ենթարկվել փոփոխությունների Ընկերության Տնօրենների Խորհրդի կազմի փոփոխության արդյունքում:

7. Որակի ապահովման ռիսկ

Եթե Ընկերությանը չհաջողվի պահպանել կամ բարելավել իր մատուցած ծառայությունների որակը, կարող է վատթարանալ նոր հաճախորդներ ներգրավելու և առկա հաճախորդներին պահպանելու ունակությունը:

Առկա հաճախորդներին պահպանելու և նոր հաճախորդներ ներգրավելու ունակությունը կախված է ծառայությունների մատուցման որակից և Ընկերության դրական իմիջից: Ընկերությունը մատուցվող ծառայությունների որակի հետևողական բարելավումը համարում է իր ռազմավարական անելիքներից մեկը:

Ընկերության հեղինակությունը և ապրանքանիշը հիմնականում դրական ազդեցություն են թողնում նոր կամ առկա ծառայությունները նոր հաճախորդներին ներկայացնելու համար, սակայն պետք է նշել, որ հեղինակությանը պատճառված վնասը կարող է հանգեցնել գործունեության և ֆինանսական վիճակի բացասական ազդեցության:

8. Պահանջարկի նվազման ռիսկ

Հայաստանում հեռահաղորդակցության ծառայությունների նկատմամբ պահանջարկը էական ազդեցություն ունի Ընկերության և մրցակիցների գործունեության վրա:

Եթե հեռահաղորդակցության ծառայությունների նկատմամբ պահանջարկն ընդհանուր առմամբ չաճի կամ խոչընդոտներ առաջանան նոր հաճախորդների գրավման համար, Ընկերության գործունեությունը, ֆինանսական ցուցանիշները կարող են ենթարկվել բացասական ազդեցության:

9. Հեռարձակման իրավունքներ

Բանակցությունները բովանդակության (content) և հեռուստաալիքների արտադրողների/իրավատերերի հետ կրում են շարունակական բնույթ: Ընկերությունը մշտապես ձգտում է բարելավել և ավելի որակյալ, բարձր վարկանիշ ունեցող հեռուստաալիքներ և բովանդակություն (content) տրամադրել իր հաճախորդներին: Հնարավոր են դեպքեր, երբ այս կամ այն հեռուստաալիքը, բովանդակության ստեղծողը դադարեցի իր գործունեությունը տվյալ տարածաշրջանում կամ ընդհանրապես: Կան

դեպքեր, երբ իրավատերը ավելի մեծ եկամուտ ստանալու ակնկալիքով, պայմանագրի ժամկետի ավարտից հետո, ցանկանում է զգալիորեն ավելացնել ծառայության գինը: Նման դեպքերում Ընկերությունը կամ գտնում է այլընտրանք տվյալ մատակարարին, կամ դադարեցնում է համագործակցությունը, կամ էլ ստիպված է լինում համաձայնել ավելի բարձր գնով ծառայություն ստանալուն (եթե տվյալ հեռուստաալիքը, բովանդակությունը ունի բարձր վարկանիշ): Նշված դեպքերում չի բացառվում, որ Ընկերության մոտ տեղի ունենա գործառնական ծախսերի որոշակի աճ: Նման ռիսկերը հնարավորինս նվազեցնելու համար Ընկերությունը ձգտում է իր վերահեռարձակման պայմանագրերը կնքել երկարաժամկետ (3 տարի ժամկետով), սակայն լինում են նաև դեպքեր, երբ պայմանագրերը կնքվում են 1-2 տարի ժամկետով:

Ընկերության գործունեության հաջողությունը, ի թիվս այլ հանգամանքների, կախված է հաճախորդներին մատուցած հեռուստատեսային ծրագրերի որակից և բազմազանությունից: Հեռուստատեսային ծրագրերի որակի և բազմազանության ապահովման հարցում ամեն ինչ չէ, որ կախված է միայն Ընկերությունից. հնարավոր են դեպքեր, երբ, անկախ Ընկերության կամքից, տեղի է ունենում որակի անկում (օրինակ վատ եղանակային պայմանների ժամանակ հնարավոր են արբանյակից ազդանշանի ստացման կամ թուլացման խնդիրներ, կամ ծրագրային խնդիրներ/վթարներ հեռուստատեսային ծրագրերի մատակարարի մոտ): Հեռուստատեսային ծրագրերի և բովանդակային բազմազանության վրա կարող են ազդեցություն ունենալ տարատեսակ հանգամանքներ, օրինակ՝ բովանդակության (content) մատակարարի պայմանագրի լուծումը տվյալ հեռուստաալիքի հետ, ինչի հետևանքով օրինակ կարող է տուժել հեռուստաալիքի բազմազանությունը: Ընկերությունը բազմաթիվ տեխնիկական և բանակցային գործողություններ է իրականացնում իրեն և իր հաճախորդներին նմանատիպ խնդիրներից և ռիսկերից ապահովագրելու համար:

Հարկ է նշել, որ հեռուստաալիքների (տեսալսողական ծրագրերի) վերահաղորդումն իրականացվում է Ընկերության և «ԹԻՄ» ՓԲԸ կողմից: Տեսադարանի բովանդակությունն (համապատասխան պայմանագրերի կնքումը) առավելապես ապահովվում է «ԹԻՄ» ՓԲԸ-ի կողմից:

10. Ապահովագրական ռիսկեր

Ընկերության ներկա ապահովագրական ծածկույթը հիմնականում ծածկում է հավանական կորուստները, պարտավորությունները ու գործունեության հետ կապված վնասները:

Ընկերության դիտարկմամբ ապահովագրական քաղաքականությունը պատշաճ կերպով ապահովում է իր հիմնական հավանական կորուստների և պարտավորությունների ապահովագրությունը:

Ընկերությունն ունի հետևյալ ապահովագրական ծածկույթները.

- Գույքի և ամբողջ ակտիվների ապահովագրություն,
- Երրորդ անձի պարտավորության ապահովագրություն,
- Բիզնեսի անընդհատության ապահովագրություն,
- Բեռնափոխադրման և ներքին տեղափոխությունների ապահովագրություն

Ներկայում Ընկերության ակտիվների գերակշիռ մասը ապահովագրված է: Եթե նշանակալից դեպք պատահի Ընկերության ակտիվներին (ներառյալ ցանցերին), կարող են առաջանալ գույքի զգալի կորուստներ, ինչպես նաև տեղի ունենան ծառայությունների մատուցման զգալի խափանումներ, որոնց համար Ընկերությունը՝ համաձայն ապահովագրական պայմանագրերի կստանա փոխհատուցում: Սակայն, հարկ է նշել, որ կախված գույքային վնասի մասշտաբներից՝ Ընկերությունը կարող է ունենալ դժվարություններ վնասված գույքը ժամանակին վերականգնելու հարցում: Գույքային էական կորուստները ժամանակին չվերականգնելը կարող է բացասական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Հարկ է նշել, որ, համաձայն Վարկային պայմանագրի, եթե Ընկերությունը ակտիվների հետ կապված պատահարներից ստացված ապահովագրական հատուցումները չկարողանա օգտագործել այդ ակտիվների վերանորոգումը, վերականգնումը կամ փոխարինումը ֆինանսավորելու համար, ապա տվյալ դրամական միջոցները պետք է ուղղվեն Վարկային միջոցների մարմանը:

11.Տվյալների արտահոսք

Ընկերությունն իր գործունեության մեջ կուտակում, պահպանում և օգտագործում է տվյալներ, որոնք կարող են պաշտպանված լինել «Անձնական տվյալների պաշտպանության մասին» և «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքներով: Ընկերությունը տեխնիկական և կազմակերպչական միջոցներ է ձեռնարկում հաճախորդների տվյալները և այլ դասակարգված տեղեկատվությունը արտահոսքից և չարտոնագրված հասանելիությունից պաշտպանելու նպատակով՝ համաձայն գործող գաղտնիության պահանջների: Տեղեկատվության տեղափոխումը համակարգից համակարգ կատարվում է բացառապես գաղտնագրված տարբերակներով:

Ընկերությունը ներդնում է Data Loss Prevention (DLP) համակարգ, որը ավելի կբարելավի արտահոսքի դեմ պաշտպանության մակարդակը:

Ընկերությունն աշխատում է երրորդ կողմի ծառայություններ մատուցողների հետ, ինչպիսիք են ծրագրային ապահովում իրականացնող որոշ ընկերություններ, որոնք կարող են լիովին

չհամապատասխանել համապատասխան պայմանագրային պայմաններին և իրենց պարտադրվող տվյալների պաշտպանության բոլոր պարտավորություններին: Այդ իսկ պատճառով երկրորդ կողմին ծրագրային ապահովման սպասարկման նպատակով տրամադրվում է հասանելիություն միայն թեստային համակարգերին, որոնք չեն պարունակում անձնական տվյալներ հանդիսացող տեղեկատվություն կամ պարունակվող տեղեկատվությունը ապաանձնավորված է:

Ընկերությունը «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի հիման վրա մշակել է «Անձնական տվյալների մշակման ծանուցում/անձնական տվյալների պաշտպանության քաղաքականությունը»:

12. Դատական գործընթացներ

Ընկերությունը ներգրավված է մի քանի դատական վարույթներում և վերջիններիս մասով Ընկերության համար անբարենպաստ դատական ակտերի կայացումը և ուժի մեջ մտնելը կարող են էական բացասական ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական ցուցանիշների և գործունեության վրա:

Հարկ է նշել, որ կան դատական գործեր որտեղ որպես պատասխանող և/կամ երրորդ անձ հանդես են գալիս Ընկերության բաժնետեր «Թիմ» ՓԲԸ-ն և Ընկերության իրական շահառուները (գործերից մեկում Ընկերությունը ներգրավված է որպես երրորդ անձ): Տվյալ գործերում որպես հայցվոր կողմ հանդես է գալիս «Յուքոմ» ՓԲԸ-ն, ով հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան «Թիմ» ՓԲԸ կողմից «Վեոն Արմենիա» ՓԲ ընկերության բաժնետոմսերի ձեռքբերման 29.10.2020 թվականի գործարքն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին:

Ընկերությունը դատարանի կողմից «Յուքոմ» ՓԲԸ-ի վերոնշյալ պահանջի բավարարման հավանականությունը համարում է «խիստ ցածր»:

13. Գործող օրենքների հետ անհամապատասխանություն

Գործող օրենքներին, կանոնակարգերին կամ պետական մարմինների որոշումներին անհամապատասխանությունը կամ Ընկերության գործունեության նկատմամբ պետական կարգավորումների ավելացումը կարող է հանգեցնել լրացուցիչ ծախսերի:

Ընկերության գործունեությունը ենթակա է կարգավորման տարբեր պետական կառույցների կողմից՝ կապված (ա) տարատեսակ լիցենզիաների, թույլտվությունների ստացման ու երկարաձգման հետ, (բ) հեռահաղորդակցության, տեսալսողական, բնապահպանական,

առողջապահական և այլ ոլորտների հետ, ինչպես նաև (գ) անվտանգության, աշխատանքի, շինարարության և քաղաքաշինության, անձնական տվյալների պաշտպանության և սպառողների պաշտպանության օրենքներին, կանոնակարգերին և չափորոշիչներին շարունակական համապատասխանության հետ: Ընկերությունը երբեմն կարող է չհամաձայնվել կարգավորող մարմինների կողմից իրավական դրույթների մեկնաբանման կամ կիրառման հետ, և կարող է ժամանակ առ ժամանակ վիճարկել իր գործունեության ընթացքը կարգավորող որոշումները:

14. Հարկային օրենսդրության փոփոխություններ

Հարկային օրենսգրքի, հարկային մարմինների որոշումների կամ մեկնաբանությունների փոփոխությունները կարող են էական ազդեցություն ունենալ Ընկերության գործառնական արդյունքների և դրամական հոսքերի վրա:

15. Տարածաշրջանի ռազմական կոնֆլիկտները

Ընկերության գործունեության տարածաշրջանում առկա և ապագա ռազմական հակամարտությունները կարող են ունենալ հետևանքներ, որոնք կազդեն Ընկերության գործունեության վրա:

Մասնավորապես, ՀՀ և հարևան երկրների միջև հնարավոր ռազմական բախումները, պատերազմները կարող են բացասաբար ազդել ՀՀ տնտեսական ակտիվության և շուկայական կոնյուկտուրայի վրա:

16. Զարգացող երկրներին վերաբերող ռիսկեր

ՀՀ-ն հանդիսանում է զարգացող շուկա (emerging market), որում կարող են տեղի ունենալ կտրուկ կամ չնախատեսված տնտեսական կամ քաղաքական փոփոխություններ, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության, գործառնական արդյունքների և ֆինանսական վիճակի վրա:

ՀՀ-ն վերջին տարիներին ենթարկվել է էական քաղաքական, տնտեսական և սոցիալական փոփոխությունների, որոնք իրենց ազդեցությունն են թողել տնտեսության վրա:

Երկրում քաղաքական կամ կառավարական անկայունությունը, ինչպես նաև բարեփոխումներին ուղղված քաղաքականությունների իրականացման տապալումը կարող են բացասական ազդեցություն ունենալ Ընկերության, ինչպես նաև ՀՀ հետ կապված ներդրումային

գործիքների արժեքի վրա, մասնավորապես՝ բաժնետոմսերի: Շուկաների ապագա տնտեսական ուղղվածությունը, մեծապես կախված է պետական մարմինների կողմից ձեռնարկած տնտեսական, ֆինանսական և դրամավարկային միջոցառումների արդյունավետությունից, ինչպես նաև հարկային, իրավական և քաղաքական զարգացումներից:

17. Երկրի վարկանիշի ռիսկ

Միջազգային վարկանիշային գործակալության(ների) կողմից ՀՀ վարկանիշի իջեցումը կարող է բացասաբար ազդել Ընկերության գործունեության վրա, քանի որ կարող է սահմանափակել հավելյալ ֆինանսական միջոցների ներգրավումը, ինչպես նաև ազդել տոկոսադրույքների և վարկային միջոցների այլ առևտրային պայմանների վրա: Արդյունքում դա կարող է սահմանափակել Ընկերության՝ կապիտալ ծախսերի ֆինանսավորման և/կամ պարտքային միջոցների վերաֆինանսավորման համար միջոցների ներգրավման հնարավորությունները:

3.ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անկախ աուդիտորական եզրակացությամբ «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի 2023 թ. ֆինանսական հաշվետվությունը հասանելի է Ընկերության կայքում հետևյալ հղումով:

3.1.Արտաքին աուդիտն իրականացնող անձանց անունը և վարձատրությունը, ինչպես նաև նրանց անկախության փաստի ստուգման արդյունքները

Արտաքին աուդիտն իրականացվել է «ՓրայսուոթերհաուսԿուպերս» Արմենիա ՍՊԸ-ի կողմից՝

«ՓրայսուոթերհաուսԿուպերս» Արմենիա ՍՊԸ

Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0010

Վ. Սարգսյան փ. 2, «Կամար» բիզնես կենտրոն, 8-րդ հարկ

Հեռախոսահամար՝ +374 (10) 51 21 51

Վեբ կայք՝ https://www.pwc.com/am/en.html

Տնօրեն՝ Նինո Կադագիշվիլի,

Ծառայությունների դիմաց վճարված գումարը կազմել է 48,000,000 (քառասունութ միլիոն) ՀՀ դրամին համարժեք ֆիքսված գումար: Ծառայությունների գինն իր մեջ չի ներառում գործող դրույքաչափով հաշվարկված ԱԱՀ-ն ու վերադիր ծախսերը:

3.2.Շահույթի տեղաբաշխման և բաշխման, այդ թվում շահութաբաժինների վճարման առաջարկությունները

1. Ընկերությունը կարող է որոշում կայացնել (հայտարարել) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին:

2. Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշում ընդունելու համար անհրաժեշտ է Ընկերության Խորհրդի առաջարկությունը, որը պարունակում է շահութաբաժինների չափերի և դրանց վճարման կարգի մասին տեղեկատվություն:

3. Շահութաբաժինները վճարվում են Ընկերության զուտ շահույթից (կուտակված շահույթից):

4. Ըստ բաժնետոմսերի տարբեր տեսակների և դասերի միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման մասին որոշումը, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է խորհուրդը: Ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի վճարման չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը՝ տնօրենների խորհրդի առաջարկությամբ:

5. Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող նվազ լինել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժիններից:

6. Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50 տոկոսը: Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող ավելի լինել խորհրդի առաջարկածից և պակաս լինել՝ արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից:

7. Տեղաբաշխված յուրաքանչյուր տեսակի (դասի) բաժնետոմսի համար Ընկերությունը հայտարարված շահութաբաժինները կարող է վճարել դրամով կամ այլ գույքով:

8. Ընկերության բաժնետերերին շահութաբաժինները դրամով վճարելու դեպքում վճարվում են անկանխիկ ձևով՝ գումարները նրանց բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով:

9. Համաձայն ՀՀ գործող օրենսդրության՝ Ընկերությունը հանդիսանում է հարկային գործակալ՝ բաժնետերերին իրենց բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ վճարելիս:

10. Բաժնետերերին շահութաբաժինները վճարվում են՝ դրանցից ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված հարկերը նվազեցնելուց հետո:

11. Բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավունք չունի որոշում կայացնել շահութաբաժինների վճարման վերաբերյալ, եթե.

11.1. լրիվ չի վճարվել Ընկերության Կոնոնադրական կապիտալը,

11.2. շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ Ընկերության վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սնանկության) հայտանիշներին, կամ դրանք ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով.

11.3. Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից կամ կպակասի շահութաբաժինների վճարման հետևանքով,

11.4. Ընկերությունը հետ չի գնել բոլոր բաժնետոմսերը «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի դրույթներին համապատասխան:

12. Ընկերության Շահութաբաժնային քաղաքականությունը հրապարակված է. [Շահութաբաժնային քաղաքականություն.pdf (telecomarmenia.am)]

4.ՀԱՎԵԼՎԱԾ

4.1.ԿԿ Հայտարարագիրը Կանոնագրքին հետևելու և/կամ մանրամասն բացատրությունը՝ չհետևելու և դրա պատճառների մասին

- Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը բաժնետերերի ընդհանուր ժողովն է (այսուհետ՝ Ժողով): Կառավարման մյուս մարմիններն են՝ Ընկերության տնօրենների խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ), Գլխավոր տնօրենը, Վերստուգողը:

- Խորհուրդը բաղկացած է 5 (հինգ) անդամից, որից երկուսը անկախ անդամներն են:
- Ընկերությունը ձևավորել է Խորհրդին կից Աուդիտի հանձնաժողով, որը բաղկացած է բացառապես Խորհրդի անդամներից: Խորհրդին կից Աուդիտի հանձնաժողովի նախագահն է Խորհրդի անկախ անդամ Ալբերտ Տոնեյանը: Աուդիտի հանձնաժողովը դեռ չի անցկացրել Ընկերության ներքին կորպորատիվ փաստաթղթերի (կանոնադրություն, կանոնակարգեր և այլ) դրույթների փորձաքննություն:
- Ընկերությունն ունի հաստատված և կիրառության մեջ դրված Խորհրդի գործունեության կանոնակարգ:
- Կորպորատիվ կառավարման կանոնագրքի (այսուհետ՝ Կանոնակարգ) Գլուխ 6-ի, 1-ին կետով սահմանված շահութաբաժինների վճարման քաղաքականությունը հաստատվել է Ընկերության կողմից:
- Կանոնակարգի Գլուխ 2-ի, 22-րդ կետով սահմանված կորպորատիվ քարտուղար Ընկերությունում նշանակվել է:
- Ընկերությունը դեռ չի ընդունել Խորհրդի և Գործադիր մարմնի աշխատանքի գնահատման քաղաքականություն:
- «Առևտրի թույլտվության պատուհանների» (Ինսայդերական առևտուր) գործողության ժամանակահատվածները և պայմանները դեռ սահմանված չեն Ընկերության Խորհրդի կողմից:
- Ընկերության Խորհրդի անդամների, գլխավոր տնօրենի և գլխավոր հաշվապահի վարձատրությունը չի բացահայտվել Ընկերության տարեկան հաշվետվության մեջ:
- Ընկերությունն ընդունել է փոխկապակցված անձանց հետ գործարքների կնքման քաղաքականություն: Այդպիսի գործարքների կնքումը (ինչպես նաև տեղեկությունների բացահայտումը) կատարվում է ՀՀ օրենսդրությանը, «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ կանոններին, ՀՀ կենտրոնական բանկի կանոնակարգերին և Ընկերության փոխկապակցված անձանց հետ գործարքների կնքման քաղաքականությանը համապատասխան:

"Telecom Armenia" OJSC, 24/1 Azatutyan ave., Yerevan 0014, RA
«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ, Հայաստանի Հանրապետություն, Երևան
Ազատության պող. 24/1, 0014
www.telecomarmenia.am

team™
TELECOM ARMENIA